ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ <<ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ս. Պողոսյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխա, <<Տեխնոլոգիա>> առարկա, ուսումնական գործընթաց, աշխատանքային կարողություններ, ուսումնաաշխատանքային գործունեություն, զարգացում:

Սկզբնական տեխնոլոգիական կրթությունը պետք է ապահովի մարդու ներդաշնակ զարգացումը: Վաղուց հաստատվել է, որ մատներով ֆիզիկական ակտիվ գործողությունները դրական են ազդում օրգանիզմի վրա: Մարդու շարժումներն ապահովող ուղեղի կենտրոններն անմիջականորեն կապված են ձեռքերի հետ: Զարգացնելով երեխայի շարժումները մենք ստեղծում ենք հոգեկան շատ գործընթացների ձևավորման նախադրյալներ: Մի շարք գիտնականներ, ովքեր ուսումնասիրել են ուղեղի գործունեությունը, երեխաների հոգեկանը, նշել են ձեռքերի գործառույթի խթանող ազդեցությունը: Նրանք ապացուցել են, որ ձեռքերի գործողությունները նպաստում են բարձրագույն կենտրոնական նյարդային գործունեության զարգացմանը:

Ոչ մի առարկա այնքան չի տալիս ձեռքի մատների բազմաձև շարժումների զարգացման հնարավորություն, ինչպես որ ձեռքի աշխատանքն է: Առարկայագործնական գործունեությամբ պարապմունքների ժամանակ զարգանում են երեխայի այնպիսի կոորդինացված շարժումներ, ինչպիսիք են ճշգրտությունը, ճարպկությունը, արագությունը: Այն առավել արդյունավետ է տեղի ունենում 6-10 տարեկանում: [2,5]

Հիմք ընդունելով այն, որ սովորողները նախապատրաստվում են ոչ միայն հետագա կյանքին և գործունեությանը, այլ դպրոցում ուսուցանվելու տարիներին նրանց կյանքը պետք է լինի բազմակողմանի և ամբողջական, ուսուցման կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնվեն երեխաների հոգեֆիզիկական զարգացման տարիքային փուլերը, հոգեկան նոր գործընթացների ձևավորումը, ինչպես նաև առաջատար գործունեության ձևերի հաջորդական փոփոխությունը՝ խաղային, ուսումնական, ուսումնաաշխատանքային և աշխատանքային: Երեխաների զարգացման վրա ազդեցություն ունի նաև ինքնուրույն գործունեությունը, որը մեծապես պայմանավորված է հուզական դրսևորումներով: Դպրոցականը պետք է գիտակցի հենց խնդրի դրվածքը, գնահատի նոր փորձը, հսկի սեփական գործողությունների

արդյունավետությունը: Ուսումնական, ուսումնաաշխատանքային և աշխատանքային գործունեությունը, պարբերաբար ձեռք բերելով հետազոտական կամ գործնական բնույթ, ինքնին դառնում է յուրացման առարկա: Գիտելիքները, կարողությունները և ունակությունները դառնում են ոչ թե նպատակ, այլ դպրոցականի անձի զարգացման միջոց:

Հաշվի առնելով հիմնախնդրի արդիականությունը՝ առաջադրել ենք հետևյալ հիմնական նպատակը՝ ներկայացնել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականներիուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ և նպատակաուղղված կազմակերպման նպատակով <<Տեխնոլոգիա>> առարկայի դերն ու նշանակությունը:

Հաստատված է, որ ժամանակակից կրթության հիմքում դրված են յուրաքանչյուր երեխայի նպատակաուղղված զարգացումը, սոցիալականացումը, ուսուցման ամեն փուլում նրա ֆիզիկական և մտավոր հնարավորությունների համակցումը: Ուսուցման գործընթացում հատկապես տարրական դասարաններում ծագում է տեխնոլոգիական պատրաստվածության հիմնախնդիր:

Մի շարք հեղինակներ նշում են, որ դպրոցականի տեխնոլոգիական պատրաստվածության սկզբնական փուլը <<Աշխատանքի ուսուցում>> առարկան է, որը կազմում է զարգացման և դաստիարակության համակարգի օրգանական մասը: [3,4] Աշխատանքի ուսուցման մեջ տեխնոլոգիական պատրաստվածության իրականացումը նպաստում է դպրոցականների ճանաչողական, ստեղծագործական և ուսումնական գործունեության ձևավորմանը, որը շատ կարևոր է տարրական դասարաններում: Նշված խնդիրների որոշման համար մենք հատուկ տեղ ենք հատկացնում աշխատանքի ուսուցման դասընթացին, որն այսօր անվանվում է <<Տեխնոլոգիա>>:

<<Տեխնոլոգիա>> առարկան ընդարձակ հնարավորություններ է ստեղծում տեսողատարածական ընկալման, ստեղծագործական պատկերացումների, մտածողական տարբեր ձևերի, այդ թվում՝ մտավոր ակտիվության, խոսքի, կամքի, զգայությունների զարգացման համար:

Ձեռքի աշխատանքի շնորհիվ երեխան ձեռք է բերում կամային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նպատակին հասնելու ընթացքում համբերատարությունը, կայունությունը, հետևողականությունը, ակտիվությունը, աշխատանքի կատարման ժամանակ կոկիկությունը: Ձեռքի աշխատանքով զբաղվելը երեխային թույլ է տալիս դրսևորելու մտավոր այնպիսի առանձնահատուկություններ, որոնք այլ առարկաների ժամանակ քիչ են պահանջվում:

Այսպիսով, հոգեֆիզիկական գործընթացները, որոնք նպաստում են ձեռքի աշխատանքի կազմակերպմանը, հիմնավորում են <<Տեխնոլոգիա>> առարկայի հիմնական նպատակը՝ առարկայագործնական գործունեության միջոցներով (հոգեկան, ֆիզիկական, բարոյական, գեղագիտական) պայմաններ ստեղծել յուրաքանչյուր երեխայի ընդհանուր զարգացման համար:

Ինչպես յուրաքանչյուր առարկա, <<Տեխնոլոգիան>> ևս ունի լուծումներ պահանջող խնդիրներ.

- դպրոցականի ներքին դիրքորոշման, հաջողության ձգտման, ինքնարտահայտման ունակության, առարկայաստեղծագործական գոր-

ծունեության հանդեպ հետաքրքրության, աշխատանքի, բնավորության, սեփական առողջության հանդեպ արժեքավոր վերաբերմունքի ձևավորում,

- առարկայագործնական գործունեության ընթացքում հոգեկան գործառույթների՝ տեսողատարածական ընկալման, ստեղծագործական պատկերացումների, մտածողության, խոսքի, կամքի, զգայությունների զարգացում,
- կառուցողական, նկարչական-կառուցողական և տեխնոլոգիական խնդիրների լուծման գործընթացում ձեռքի կարողունակության զարգացում,
- գործունեությունը կարգավորող կառույցների զարգացում, որը նպաստում է առաջադրանքների կատարման գործընթացում կողմնորոշմանը, պլանավորմանը, հսկմանտ, գնահատմանը,
- տեխնոլոգիական տարբեր տեղեկություններ կիրառելով՝ նոր տեղեկություններ փնտրելու և արտահայտելու կարողութան ձևավորում,
- երեխայի ճանաչողական կարողությունների, այդ թվում՝ նաև մտածողության զարգացում,
- համատեղ գործունեություն կազմակերպելու միջոցով կրտսեր դպրոցականների հաղորդակցման զարգացում:

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ժամանակ դպրոցականներիը պիտի ձեռք բերեն նաև կիրառվող նյութերի ծագման, գեղարվեստական տարբեր տեխնիկաների վերաբերյալ ճանաչողական գիտելիքներ: Յուրաքանչյուր դասարանում, սկսած առաջինից, դպրոցականներին ծանոթացնում են պատրաստվող ստեղծագործության տեխնիկան բնորոշող եզրույթին (ապլիկացիա, խճանկար, մաքրամե, կոլաժ): Այս եզրույթներին տիրապետելը նպաստում է խոսքի զարգացմանը:

Բացի այդ այս կամ այն առարկայի պատրաստման ընթացքում օգտագործվում են տարբեր տեսակի թղթեր, կտորներ, թելեր, տեքստիլ, բնական և արհեստական ծագման տարբեր նյութեր, օրինակ՝ փայլաթիթեղ, մետաղալար և այլն: Այդ ընթացքում դպրոցականները ծանոթանում են օգտագործվող նյութերի հատկություններին, օրինակ՝ ճկունությանը: Տարբեր գործընթացների իրականացնելու կարողության զարգացման համար կարևոր է նաև երեխաներին ծանոթացնել աշխատանքի կատարման տարբեր տեխնիկաներին: Օրինակ, ապլիկացիան կարող է կտրվել մկրատի կամ հավասար պատռելու միջոցով, կարող է սոսնձվել կամ կարվել թելով թղթի, կտորի վրա: Մյուս կողմից երեխաների զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև տարբեր նյութերով աշխատանքի ժամանակ գործածվող միևնույն գործողությունների առանձնացումը: Օրինակ, կարելի է ծեփել կավը, ծեփամածիկը, բայց սոսնձել կարելի է թուղթը, կտորը, բնական նյութերը և այլն:

Հատուկ գիտամեթոդական գրականության մեջ նշված է, որ ձեռքի կարողությունները զարգանում են տարբեր նյութերի վերամշակման գործընթացում, առարկայի յուրահատկությունը թույլ է տալիս ապահովել ձեռքի գործառույթը: Որքան շատ են գործառույթի շարքերը, որը տիրապետում է երեխան, այնքան լավ է զարգացած շարժումների կոորդինացիան, այնքան հեշտ է երեխան տիապետում գործունեության նոր ձևերին: Դրա համար էլ առարկայի բո-

վանդակությունը բնորոշվում է ձեռքի այնպիսի տարբեր գործառույթներով, ինչպիսիք են տարբեր ձևեր կտրելը, տրորելը, պտտելը, դասավորելը ուղիղ և շեղ, պատռելը, ծգելը, ծեփելը և այլն: Հաճախ հիմնական աշխատանքը կատարում է առաջատար ձեռքը, իսկ մյուսն իրականացնում է օժանդակող գործառույթներ: [6]

Տարբեր գործառույթներ զարգացնում են այս կամ այլ հոգեֆիզիկական գործընթացները, սակայն ոչ միևնույն մակարդակով, բայց տարբեր շարժումների ընթացքում ձևավորվում է երեխաների ուշադրությունը: Աշխատանքի ժամանակ նրանք ստանում են սեփական ստեղծագործական գործունեության կազմակերպման փորձ՝ կողմնորոշում առաջադրանքի կատարման ընթացքում, պլանավորում, գործողությունների արդյունքների հսկում, գործունեության տարբեր ձևերի ընտրություն:

Ձեռքի աշխատանքի դասերի ժամանակ հատուկ նշանակություն ունի նկարչական գործունեությունը՝ որպես երեխաների պատկերացումների և գեղագիտական զգայությունների զարգացման արդյունավետության միջոց:

Ստեղծագործականգործունեության ընթացքում զարգանում են անձնային և բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, աշխատանքի հանդեպ բարյացակամությունը, ուրիշներին օգնելու պահանջմունքը, ուրիշի աշխատանքի հանդեպ հարգանքը և այլն:

<<Տեխնոլոգիա>> առարկայի ուսումնական թեմատիկ պլանի բաժիններից են՝

1. Ընդհանուր մշակութային և ընդհանուր աշխատանքային գիտակություններ, ինքնասպասարկումը:

2. Նյութերի մշակման տեխնոլոգիաները, նյութերի բազմազանությունը՝ (հասարակ թուղթ, անձեռոցիկ, վատման, փայլաթիթեղ, ծեփամածիկ, կտոր, թել, պարան, թռչնի փետուր, ձվի կեղև), նյութերը մշակելու ձևերը (ծեփ, ապլիկացիա, խճանկար, կար, գեղարվեստական դասավորություն), աշխատանքային գործիքների հետ վարվելու անվտանգության ձևերը (մկրատ, ասեղ, քանոն):

3. Ձևավորումը և մոդելավորումը (մասերի առանձնացում, միավորում, տարբեր նյութերով տարբեր ձևերի ստացում):

<<Տեխնոլոգիա>> առարկան արդյունավետ հիմք է ստեղծում դպրոցականների ինքնակայացման, ներդաշնակ զարգացման համար և նպաստում է անձնային, ճանաչողական, կարգավորող, հաղորդակցական գործունեությունների զարգացմանը:

Անձնային արդյունքներից են՝ դպրոցի և առարկայագործնական գործունեության դասերի հանդեպ դրական վերաբերմունքի ներքին դիրքորոշումը, դասագրքում տեղ գտած առարկայական-ստեղծագործական գործունեության հանդեպ հետաքրքրությունը, ուսուցչի և ընկերների առաջարկներն ու գնահատականները հասկանալը, սեփական առարկայագործնական գործունեության արդյունքը գնահատելու կարողությունը, ուսման մեջ հաջողություններ ունենալու պատճառի ըմբռնումը, դասընկերոջ աշխատանքը գնահատելու կարողությունը և այլն:

Ճանաչողական արդյունքներից են՝ օգտվել նշաններից, աղյուսակներից, բանավոր ներկայացնել պարզ նախադասություններ, դրսևորել առաջադրանքը կատարելու տարբեր հնարավորություններ, համեմատել երկու

առարկաները, հաստատել ուսումնասիրվող երևույթների պատճառահետևանքային կապը և այլն:

Կարգավորող արդյունքներից են՝ ըմբռնել և պահպանել ուսումնական առաջադրանքը, որոշումների պլանավորման մեջ հաստատել կանոնները, աշխատանքն ավարտելուց հետո սեփական գործողությունները ներկայացնելու ունակությունը, գործողությունները ճիշտ կատարելու գնահատումը և այլն:

Հաղորդակցական արդյունքներից են՝ խոսել զուգընկերոջ հետ նոր հետաքրքրությունների մասին, ընդունել դիմացինի կարծիքը, համատեղ գործունեության մեջ ստուգել զուգընկերոջ գործողությունները, ձևավորել սեփական կարծիքը և դիրքորոշումը, հաղորդակցման ընթացքում տալ իրավիճակին համապատասխանող հարցեր:

Այսպիսով, աշխատանքը համարվում է դաստիարակության հիմնական մասը: Սակայն հատուկ (օժանդակ) դպրոցում այն ունի կազմակերպման այլ ընթացք, քանի որ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականներն ունեն ոչ միայն աշխատանքային, այլ նաև ճանաչողական գործունեության խանգարումներ: Աշխատանքի ուսուցումը սերտորեն կապված է դպրոցականի բարոյական, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակության հետ:

Այսպես, հատուկ (օժանդակ) դպրոցում <<Տեխնոլոգիան>> ուղղակի առարկա չէ: Նրա նշանակությունը բավականին մեծ է և սովորողների հետագա կյանքի համար շատ կարևոր:

Մի շարք մասնագետներ իրենց աշխատություններում նշում են, որ աշխատանքի դասերին հատուկ (օժանդակ դպրոցի ուսուցիչը պետք է ապահովի մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականի հոգեֆիզիկական խանգարումների վերացման, ճանաչողական հնարավորությունների զարգացման համար հատուկ պայմաններ: Այս ամենի համար անհրաժեշտ է աշխատանքում առաջին հերթին ձևավորել նյութերի, գործիքների հատկությունները և որակները վերլուծելու կարողություն, համեմատել պատրաստված իրերը և կատարել պարզ ընդհանրացումներ, տրված հարցերին ճիշտ պատասխանելու կարողություն, հաշվետվություն ըստ ուսուցչի պլանի, առարկայագործնական քարտի, ղեկավարի հրահանգի տալ բացատրություն աշխատանքի կատարման հաջորդականության մասին: [2, 6]

<<Տեխնոլոգիա>> առարկայի զարգացնող դաստիարակչական ուղղվածությունը նպաստում է ոչ միայն մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության զարգացմանը, այլ նաև աշխատանքային գործունեությանն անհրաժեշտ անձի սոցիալական որակների դաստիարակությանը, մասնավորապես աշխատանքի հանդեպ հետաքրքրության, կենսական դրական հույզերի, կոլեկտիվում աշխատելու կարողության: Որպեսզի բարձրացվի զարգացման խնդիրներ ունեցող երեխայի արժեքը՝ պետք է նրան սովորեցնել ինքնուրույն կերպով ակտիվացնել մտավոր ընդունակությունները: Հենց <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման առաջին քայլերից է համարվում ինքնուրույն աշխատանք կատարելու ունակության զարգացումը, որը հիմք է ստեղծում հետագա մասնագիտական սովորույթների և ունակությունների դաստիարակության, աշխատանքում

կարողությունների կազմակերպման, նյութերի, գործիքների նկատմամբ կոկիկ ու հոգատար վերաբերմունքի ձևավորման, անվտանգության կանոնների պահպանման և սանիտարահիգիենիկ պահանջների կատարման համար: Սկզբնական շրջանում դպրոցականները, ստանալով տարրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, դառնում են ավելի ինքնուրույն:

Հատուկ (օժանդակ) դպրոցում աշխատանքային դաստիարակությունը կազմակերպվում է <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ժամանակ, դպրոցի տարածքում, բնության գրկում, տարբեր խաղերի միջոցով: [1] Այս ամենը նպաստում է երեխայի մտավոր ունակությունների զարգացմանը: Նա ստիպված է լարված մտածել այն բանի մասին, թե ինչը և ինչպես պետք է կատարի: <<Տեխնոլոգիայի>> ժամին դպրոցականը գործ է ունենում տարբեր գործիքների և նյութերի հետ: Այսինքն, աշխատանքի միջոցով ակտիվանում է մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի մտավոր գործունեությունը, որը հատուկ (օժանդակ) դպրոցի հիմնական խնդիրներից է:

Հաստատված է, որ աշխատանքային գործունեության շնորհիվ զարգանում է նաև նրանց ողջ մկանային համակարգը: Երկարատև համակարգային աշխատանքային մարզումներն ազդում են երեխաների ընդհանուր աշխատունակության և ֆիզիկական դիմացկունության զարգացման վրա: Վարժությունների կատարման արդյունքում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի ձեռքերը դառնում են ավելի ուժեղ և ճկուն:

<<Տեխնոլոգիա>> առարկայի ժամին զարգանում են նաև մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի տեսողական հիշողությունը, տարածական պատկերացումները: Կարևոր խնդիրներից է համարվում ուսուցչի և աշակերտի միջև ճիշտ փոխհարաբերությունների ձևավորումը: Ուսումնաաշխատանքային գործունեության կարևոր նպատակներից է կատարվող աշխատանքից բավականություն ստանալու պահանջմունքի բավարարումը:

Հաստատված է, որ <<Տեխնոլոգիայի>> յուրաքանչյուր դասին մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականին պետք է միշտ ուսուցանել ոչ միայն աշխատանքի հասարակ նշանակության, այլ նաև գործնական ուղղվածության մասին: Որպեսզի երեխաների մեջ ձևավորվի կոլեկտիվի և ընկերասիրության գաղափարը, ուսուցիչը դիտարկում է գործնական աշխատանքներ, որոնք ենթադրում են աշխատանքի կոլեկտիվ ձևեր: Փոխօգնության կարողության դաստիարակությանը պետք է հասնել ուժեղ և թույլ աշակերտների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Պետք է նաև իրականացնել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի ֆիզիկական զարգացմանը, մասնավորապես՝ մատների շարժումների ճկունությանն ուղղված հատուկ աշխատանքներ:

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման շնորհիվ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականը ձեռք է բերում տեխնոլոգիական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, դրանք կիրառում է դասերին և գործնականում: Չնայած, որ հատուկ (օժանդակ) դպրոցում կան նաև շարժողական խնդիրներով դպրոցականներ,

այնուամենայնիվ նրանց էլ պետք է դրդել աշխատանքի:

Այսպիսով, աշխատանքային գործունեության ձևավորումը և կազմակերպումը հատուկ (օժանդակ) դպրոցում ունի ուղղորդող նշանակություն, որի շնորհիվ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականը նախապատրաստվում է հետագա մասնագիտական աշխատանքին և շրջապատին հարմարեցմանը, ինչպես նաև զարգանում են նրա գործունեության մյուս ձևերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կաֆյան Է. Մ., Պայլոզյան Ժ.Հ. Դիդակտիկ խաղեր և նյութեր ԿԱԿՈՒ երեխաների գնահատման և զարգացման համար// Նյութեր հանրակրթական, ներառական և հատուկ ուսումնական հաստատությունների մանկավարժների համար /Երևան, Զանգակ-97,-2008, էջ. 34 -64.
2. Аверин, В. А. Психология детей и подростков / 2-е изд-е, перераб. - СПб.: изд. Михайлова В. А., 2008.
3. Атуров П. Р. Связь трудового обучения с основами наук: Книга для учителя/П. Р. Атуров, Н. И. Бабкин, Ю. К. Васильев – М.: Просвещение, 1983.
4. Бака И. И. Теоретические основы подготовки школьников к творческому труду: учебное пособие., М., 2009.
5. Ефанова З. А. Трудовое обучение.- Волгоград: Корифей, 2010.
6. Кузнецова Л. Взаимосвязь «рука – мозг», или о забытых аспектах трудового воспитания// Воспитание школьников. – 2002. - №2.

РЕЗЮМЕ

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ПРЕДМЕТА “ТЕХНОЛОГИЯ” В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ И ВОСПИТАНИЯ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ С ПРОБЛЕМАМИ УМСТВЕННОГО РАЗВИТИЯ

С. С. Погосян

преподаватель кафедры специальной педагогики и психологи Армянского государсвеного подагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлены значение предмета “Технология” в процессе обучения и воспитания младших школьников с проблемами умственного развития, раскрыты средства приобретения трудовых умений, навыков и технологических знаний.

SUMMARY

THE ROLE AND IMPORTANCE OF THE SUBJECT ,,TECHNOLOGY,, IN THE PROCESS OF EDUCATION AND TRAINING OF CHILDREN WITH INTELLECTUAL DEVELOPMENT DISABILITIES

S. S. Pogosyan

lecturer at the chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, candidate of Pedagogical Sciences.

The article describes the role of the subject ,,Technology,, in the process of education and upbringing of lchildren with mental disabilities, as well as the means for acquiring technological knowledge and working capabilities of those children.